ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/162

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ

Մասնակից՝ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Պատվիրատու՝ «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ավետիսյանի

Մասնակից՝ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Գևորգյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀԱՓԿ-ԳՀԾՁԲ-19/03» ծածկագրով գնանշման հարցում, փոխադրամիջոցների առանձին մասերին առնչվող պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱՓԿ-ԳՀԾՁԲ-19/03-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15870-2019 գրությամբ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 19.09.2019թ. թիվ 93 գրության հիման վրա, 26.09.2019թ.-ին «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 26.09.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 02.10.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 02.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.10.2019թ.-ին:

2. <u>«Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

«Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 19.09.2019թ. թիվ 93 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ ներկայացնում է «ՀԱՓԿ-ԳՀԾՁԲ-19/03» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում հաղթած, սակայն պայմանագրային պարտավորությունները խախտած «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մանակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն 01.10.2019թ.-ին թիվ 95 գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է, որ կողմերը բանավոր բանակցությունների արդյունքում եկել են համաձայնության, ուստի խնդրել են նախաձեռնված ընթացակարգը կասեցնել:

Նույն դիրքորոշումը նիստով բանավոր կերպով հայտնեց նաև Պատվիրատուի ներկայացուցիչը:

3. <u>«Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 27.09.2019թ.-ին գրությամբ դիմել է «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15870-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք:

Մասնակցի ներկայացուցիչը նեկայանալով նիստին, բանավոր կերպով հայտնեց, որ բանավոր բանակցությունների արդյունքում Պատվիրատուի հետ եկել են համաձայնության՝ շարունակել 22.03.2019թ.-ին կողմերի միջև կնքված պետական գման պայմանագիրը:

4. <u>ՍՑ-LO-2019/162 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի միջև 22.03.2019թ.-ին կնքվել է թիվ «ՀԱՓԿ-ԳՀԾՁԲ-19/03-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ' Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ մինչև 15.12.2019թ.-ը (Պայմանագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից՝ 22.03.2019թ.-ին):

Պայմանագրի հավելված 1.1-ով սահմանվել է իրականացվելիք նորոգումների և տեխնիկական սպասարկումների ընթացակարգի համառոտ նկարագիրը, համաձայն որի՝ ավտոմեքենայի անհրաժեշտ նորոգման և տեխնիկական սպասարկման համար Կատարողը պարտավոր է պատվիրատուի նշված ժամկետում և պահանջով ընդունել ավտոմեքենան SU կայան և անմիջապես իրականացնել ախտորոշման, անհրաժեշտ քանդման, ապամոնտաժման, զննման և գնահատման աշխատանքներ:

«Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը 29.07.2019թ.-ին «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին է ներկայացրել անհրաժեշտ ծառայությունների մատուցման հայտ: Մասնակցի կողմից հայտում նշված ժամկետում անհրաժեշտ վերանորոգման ծառայությունները չեն մատուցվել: Պատվիրատուի հայտով ներկայացված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով, սակայն մասնակցի կողմից պայմանագրով սահմանված ծառությունները չեն իրականացվել, խախտելով պայմանագրի դրույթները:

www.gnumner.am համացանցային կայքում 24.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով պայմանագրի 2.1,3 բ) ենթակետը, 2019թ. սեպտեմբերի 24-ից լուծում է 2019 թվականի մարտի 22-ին կնքված թիվ «ՀԱՓԿ-ԳՀԾՁԲ-19/03-1» ծածկագրով պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15870-2019 գրությամբ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ

անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է փոխադրամիջոցների առանձին մասերին առնչվող պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

«Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի միջև 22.03.2019թ.-ին կնքված թիվ «ՀԱՓԿ-ԳՀԾՁԲ-19/03-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Պայմանագրի կատարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ մինչև 15.12.2019թ.-ը (Պայմանագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից՝ 22.03.2019թ.-ին):

Պայմանագրի հավելված 1.1-ով սահմանվել է իրականացվելիք նորոգումների և տեխնիկական սպասարկումների ընթացակարգի համառոտ նկարագիրը, համաձայն որի՝ ավտոմեքենայի անհրաժեշտ նորոգման և տեխնիկական սպասարկման համար Կատարողը պարտավոր է պատվիրատուի նշված ժամկետում և պահանջով ընդունել ավտոմեքենան ՏՍ կայան և անմիջապես իրականացնել ախտորոշման, անհրաժեշտ քանդման, ապամոնտաժման, զննման և գնահատման աշխատանքներ:

«Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը 29.07.2019թ.-ին «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին է ներկայացրել անհրաժեշտ ծառայությունների մատուցման հայտ: Մասնակցի կողմից հայտում նշված ժամկետում անհրաժեշտ վերանորոգման ծառայությունները չեն մատուցվել: Պատվիրատուի հայտով ներկայացված

ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով, սակայն մասնակցի կողմից պայմանագրով սահմանված ծառությունները չեն իրականացվել, խախտելով պայմանագրի դրույթները:

www.gnumner.am համացանցային կայքում 24.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով պայմանագրի 2.1,3 բ) ենթակետը, 2019թ. սեպտեմբերի 24-ից լուծում է 2019 թվականի մարտի 22-ին կնքված թիվ ՀԱՓԿ-ԳՀԾՁԲ-19/03-1 ծածկագրով պայմանագիրը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ թիվ «ՀԱՓԿ-ԳՀԾՁԲ-19/03-1» ծածկագրով գնման Պայմանագիրը սեպտեմբերի 24-ին միակողմանի լուծվել է՝ «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 29.07.2019թ.-ին «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին ներկայացրած անհրաժեշտ ծառայությունների մատուցման հայտում նշված ժամկետում անհրաժեշտ վերանորոգման ծառայությունները չմատուցելու հետևանքով:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 24.09.2019թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 24.09.2019թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի 01.10.2019թ.-ին Բողոքներ քննող անձին ուղղված թիվ 95 գրությանը, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գնումների գործընթացին մանակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը կողմերի համաձայնության գալու հիմքով ենթակա չէ կասեցման: Այդպիսի օենսդրական հիմք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ՝ թե Օրենքով, թե Կարգով սահմանված չէ:

Ընդ որում, հարկ է փաստել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նույնպես որևէ նորմ նախատեսված չէ պայմանագրային հարաբերությունների պարտավորությունների էական խախտման հիմքով դադարեցնելու դեպքում, այդ նույն հարաբերությունների շարունակում բանավոր բանակցությունների միջոցով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ յուրաքանչյուր գործարք (պայմանագիր) նախևառաջ կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Գործարքի կնքման համար առաջնային նշանակություն ունեն «կամք» և «կամահայտնություն» հասկացությունները: ՀՀ վճռաբեկ դատարանը, բացահայտելով նշված հասկացությունների բովանդակությունը, արձանագրել է, որ «կամքը» անձի ներքին ցանկությունն է, պահանջը, ձգտումը, մտադրությունը, դիտավորությունը, համաձայնությունը, իսկ «կամահայտնությունը» կամքի արտահայտման արտաքին ձևն է, միջոցը, եղանակը: Այսինքն՝ գործարքն այն կնքած անձանց ներքին կամքի և արտաքին կամահայտնության համակցությունն է *(տե՛ս, Նելլի Հակոբյանը և մյուսներն ընդդեմ «Համխաչ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը)*:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ ինչպես ցանկացած պայմանագիր, ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) պայմանագիրը ևս կամային ակտ է, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն: Այսինքն՝ ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) իրավահարաբերության առաջացման համար անհրաժեշտ է, որ պայմանագրի կողմերը հստակորեն դրսևորեն իրենց կամահայտնությունն պայմանագիր կնքելու վերաբերյալ, և այդ կամքն ուղղված լինի կատարող-վաճառողի դեպքում՝ իր արտադրած, գնած ապրանքները կամ աշխատանքի և/կամ ծառայության արդյունքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) գնորդին հանձնելուն, իսկ գնորդի դեպքում՝ այդ ապրանքներն (աշխատանքը, ծառայությունը) ընդունելուն և դրանց համար որոշակի գումար վճարելուն: Նման կամքի դրսևորումը և դրա իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողությունների իրականացումը, սակայն, դեռևս բավարար չէ ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) իրավահարաբերության առկայության փաստն արձանագրելու համար: Միաժամանակ անհրաժեշտ է, որ կողմերի կամահայտնությունն ամրապնդված և ձևակերպված լինի ՀՀ օրենսդրությամբ գործարքի տվյալ տեսակի համար սահմանված կարգով:

Այլ կերպ ասած՝ այն պետք է կողմերի միջև ամրագրվեր գրավոր կարգով, այնպես ինչպես և կնքվել է թիվ «ՀԱՓԿ-ԳՀԾՁԲ-19/03-1» ծածկագրով պետական գնման պայմանագիրը, հիմք ընդունելով Օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները,

համաձայն որի՝ պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն' պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում' նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված' ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ- ն, խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15870-2019 գրությամբ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**